ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

14 ՄԱՅԻՍԻ 2025թ.

ԹԻՎ 2572

«ՀՈՎԵՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Աշտարակի համայնքապետարանի և ՀՈՎԵՐ ՍՊԸ-ի միջև 2025 թվականի մայիսի 05-ին կնքվել է ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-2 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր)սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Հիմք ընդունելով ՀՈՎԵՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը,որի համաձայն անհնար է իրականացնել պայմանագրով սահմանված մատակարարումը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանգիրը.

ա) մատակարարումը չի մատակարարվել

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՈՎԵՐ ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր 300(երեք հարյուր) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով ՀՈՎԵՐ ՍՊԸ-ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր տուժանքով սահմանված որոկավորման ապահովման 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ և պայմանգրի ապահովման 160000 /հարյուր վաթսուն հազար /ՀՀ դրամ գումարները Աշտարակի համայնքապետարանի 900445101083 հաշվին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն ՀՈՎԵՐ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝
Հրայր Հակոբյան
*աշխ հեռ. (0232) 3-10-26*117*